

առնուել զբոմբիւն ճայնին, իբրև ի վիմաց ինչ արծազան լինելոյ կարծիս բերելով, /տես Թ.Արծրունի, Պատմութիւն տանն Արծրունեաց, Թիֆլիս, 1917, էջ 203/:

4. Առհասարակ բնակավայրեր հիմնելիս /մասնավորապես բարձր լեռնային, խիստ կտրտված տեղանք ունեցող վայրերում/ հաշվի են առնվել էթնիկ ավանդույթից բացի, բնական պաշտպանվածութան, տրստեսավարման նպատակահարմարութան /մշակովի հողերի խնայողութուն, ջրամատակարարման, անտառների և արոտավայրերի մերձավորութուն/ , արևահայացութան և այլ հանգամանքներ:

Ա.Ե.ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՆ

ՀԱՅԿԻ ԵՎ ԲԵԼԻ ԱՌԱՍՊԵԼԻ ՎԵՐԼՈՒԵՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ

1. Հայերենում Հայկ. է անվանվել Օրիոն համաստեղութունը:

Ըստ հունական ավանդութան, Օրիոնը հետապնդել է պլեյադուհիներին: Այլևայլ ժողովուրդների առասպելներում ևս հակադրվում են Օրիոն և Բազումք /Պլեյադուհիներ/ համաստեղութունները /երկնակամարում նրանք շարժվում են իրար հեռւից/: Բազումք համաստեղութունը հայերեն կոչվել է նաև Ալաունք կամ Ալաւունք, որոնք կարելի է համեմատել հունարեն պլեյադուհիների անվան հետ /հնդկավրպական *pley-, ,լողալ,, արմատից. պլեյադուհիները Պլեյոնես օվկիանոսուհու և Աթլասի դուստրերն են/: Ուրարտերեն alau նշանակում է տեր: Հետաքրքիր է, որ Հայկի հակառակորդ Բելի անունը ևս սեմական լեզուներում նշանակում է տեր /Խորենացու աղբյուրը՝ Մար Աբաս Կատիևան ասորի էր/, և Հայկի ու Բելի հակադրութունը կարող է լինել ոչ թե Ուրարտուի և Ասորեստանի, այլ հայերի և Ուրարտուի միջև եղած պատերազմների հետագա առասպելականացված արտացոլումը:

2. Հաշվի առնելով, որ դիցաբանական հերոսի անունն առասպելի զարգացման տարբեր փուլերում կամ ազգակից ավանդույթներում կարող է անցնել նրա հակառակորդի վրա /Կ.Լևի-Ստրոս/, տեղին է հիշել, որ հայերի հայ ցեղանունը /որն ըստ ավանդութան կապվում է Հայկի անվան հետ/ փորձ է արվել կապելու հնդկավրպական , ,տեր, այր, , բառի հետ: Ըստ մոնղոլական ժողովուրդների ավանդութունների, Խուխդեյ-մերգենը/ երկնային նետածիգ/ շանթարձակ աստվածութուն էր, ժողովրդի նախահայրը, 9 որդու և 9

դասեր հայր, Օրիոնի համաստեղութան անձնավորումը, որը հետազոտ-
 դում է 3 մարտի համաստեղությանը /հմմտ. Հայկի Ֆունկցիաները/։
 Գործառույթամբ խուխեղեխի հիշեցնող հերոս է էրիխ-մերգենը /նե-
 սածիլ բույս մատ/, որ նետեր է արձակում Միչիթի /Բագումը համաս-
 տեղությունը/ վրա։ Աստուծու միջնորդությամբ կրած անհաջողությու-
 նից հետո, Լա կտրում է իր բույս մատը և վերածվում սափաստալայիս
 արջամկան։ Կարված մատի և մարմնի այլ մասերի վերածվելը խթոնիկ
 կենդանու բնորոշ է ինչ-որ գանգաքի համար աստվածության /հա-
 ճախ շանթարձակ/ կողմից պատժվելու հետ կապված սյուժեներին /վ.
 Տոպոլով/։ Մի այլ ազգակից ավանդության համաձայն, ավագ քույրն
 իր եղբորը համոզում է կենակցել իր հետ, և մերժումից հետո հա-
 նում է նրա աչքերն ու թաղում գետնում, որոնք վերածվում են չոր-
 ջիկների։ Հայրն անիծում է աղջկան, և Լա վերածվում է կառվի։ Ըստ
 տարբեր ավանդությունների, փոքրասիական Ատտիսը պատժվում է կամ
 շանթարձակ Ձևսի կողմից, կամ հետապնդվելով մայր աստվածության
 կողմից, խելագարվում է, ներքինացնում իրեն և մեռնում, սկիզբ
 տալով ծառերի ու ծաղիկների /հմմտ. էրիխ մերգենի բույս մատը կրթ-
 րելը ևն/։

3. Բերված փաստերը կարող են ինչ-որ չափով հաստատել զրականու-
 թյան մեջ արդեն արտահայտված Հայկի և Ատտիսի անունների ազգակցու-
 թյան տեսակետը. ի միջի այլոց, Ատտիսին համապատասխան սեմական
 աստվածությունը ևս կոչվում էր տեր /Ադոնիս/։ Ամեն դեպքում հա-
 վանական է թվում Հայկ անունը /և, շատ հնարավոր է՝ Լաև հայ ցե-
 դանունը/ կապել *poti- > *heti- Լախաձևի, քան առավել քնդուն-
 ված haia -ի հետ։ Ըստ մեր արտահայտած տեսակետի, հայերի ցեղա-
 նունը կապվում է ուրարտական աղբյուրների Etiu-ni (resp. hatio-)
 երկրի անվան հետ /համապատասխանում է Հայաստանի կենտրոնական
 Այրարատ Լահակին/։ Ըստ ավանդության, Հայկը եկել է Բաբելոնից
 և հաստատվել Հարը /հնարավոր է, որ համապատասխանում է ուրար-
 տական աղբյուրների էթիուսյան Uiteruđi -ին, հմմտ.
 հ-ե *pētēr- հայր/ երկրում, բայց նրա բոլոր հաջորդ սերունդ-
 ները /Արամանյակ, Արամայիս, Հարմա, Արա Գեղեցիկ ևն/ ապրել և
 գործել են Այրարատում, որը հին զրականության մեջ հատկապես է
 որդես Հայաստան երկրի համարժեք անվանում։ Էթիուսի և շրջակա
 երկրների հառուկ անունների արդեն բերված հնարավոր Լախա հայերեն
 մեկ Լաքանություններին կարելի է ավելացնել որոշ շրանունների
 ստուգաբանություններ. Ildarunia, հմմտ. հ-ե *elt- շրանվանակազ-

մական հիմք և հայ առու <*sreu-, Arşania, հմմտ. *Harg- , փայ-
լել, /ըրակավաակազմական հիմք/ ևն:

Ա.Ս.ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԵՊՀ

ԶԿԱՌՐՍՈՒԹՅԱՆ ՄԻ ԻՆՔՆԱՏԻՊ ԵՂԱՆԱԿ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔՈՒՄ

1. Լժային ձկնորսության եղանակներից առավել ինքնատիպը չանց-
ով ձկնորսությունն է, որը, ըստ մեր զբառած նյութերի, կիրառվել
է ՀՍՍՀ վարդենիսի շրջանի Կարճաղբյուր գյուղում և, որքան էլ զար-
մալալի, Սևանի ավազանի այլ բնակավայրերում հայտնի չի եղել: Չան-
զբն ունի երեք կեռիկ-մտտներ, որոնք ձևավորված են մեկ մետաղե
հիմքից: կեռիկներից երկուսը հավասար են և մի քիչ ցածր, իսկ մեջ-
տեղիկը բարձր է ու երկար: Դա արվել է հեռւյալ կառուցումներով.
Նախ, որ շանգը լիժը զցցելիս չընկնի քիթ ու բերնի վրա, շուռ չգա
ու աստի շրի հատակում եղած մամուռներին ու խոտերին: Այնուհետև,
շնորհիվ մեջտեղի բարձր մատի, շանգը լիժը զցցելիս, գործիքը շրջ-
վում է այնպես, որ կեռիկները կանգնում են ուղիղ դիրքով /մեջտե-
ղի բարձր կեռիկը նախատեսված է մեծ ձկների որսի համար/: Ազգագրա-
կան նյութերը վկայում են, որ Կարճաղբյուրում կիրառվել է նաև
երկամասնի շանգ, որը հավանաբար, այդ գործիքի նախնական տիպը պետք
է համարել: Երբ այն զցցում էին լիժը, մեջտեղի երրորդ մատի բացա-
կայություն հեռանքով շանգն քնկնում էր բերնիվայր՝ կեռիկները
ներքև: Նման դեպքում մտնում էին շուրք և ուղղում շանգը:

2. Չանգի երկաթե հիմքն ունենում էր 3,5 սմ լայնք, մեջտեղի
մեծ մասը՝ 23 սմ, իսկ կողքերի երկու փոքր մասներից յուրաքան-
չյուրը՝ 16 սմ երկայնք: Մետաղե հիմքի կենտրոնում արվում էր
փոքր անցք, որպեսզի ոսկրի լայն մասը կապվեր հիմքին: Ոսկրը լի-
նում էր խոշոր կամ մալր եղջերավոր անասունի առջևի թիակներից
(երբեմն նաև խոշոր եղջերավոր անասունի մակառի լայն ոսկրից) լավ
մաքրում էին և հարմարեցնում շանգի երկաթե հիմքի շափերին: Չան-
գի հիմքից արված անցքից մտնում էին մետաղալար կամ կաշվե սրեմ
և կապում մյուս երեսում, որի շնորհիվ ոսկրի մի ծայրը հուսալիոր-
րեն ամրացվում էր երկաթե հիմքին, որի մյուս զլիւում ևս անցք էին
անում, անցկացնում դաբադած կաշվի սրեմ, որի ծայրերը կապելով,
օղակ էին անում, 25-30 սմ երկայնք ունեցող շանգի թելի մի ծայրը
կապում էին օղակին, մյուսը՝ ամուր փայտին, որն անհրաժեշտ էր